

տարւոյն սկիզբները կարելի եղաւ Վա-
միզ գետը ձգել այս ծովոյ հրաշալիքը :

Հիմա այս նաւուն ներքին կողմը
կ'աշխատին, այսինքն սենեակները, սը-
րահները, յարկերն և ուրիշ մասերը
կը շինեն, և յոյս կայ թէ այս ամա-
ռուան մէջ իր առաջին ճանապարհոր-
դութիւնը կատարէ, որուն շատ նա-
ւահանգիստք չեն կարող կայանք տա-
լու իր անհնարին խորութեանն համար :

Նաւ քաղմամբան :

Ընդդիմ հայրենիք է նաւական նու-
րաձեւութեանց : Բաց յայլոց, յամին
1858 այնպիսի փորձ մը եղաւ, որ եզա-
կանութեանն համար արժանի է մտա-
դրութեան :

Նաւ մը շինուեցաւ այնպիսի ճար-
տարութիւն ունեցող, որ քանի մը վայր-
կենի մէջ կրնայ իր վաճառքները դուրս
թափել ու շարունակել ճամբան դա-
տարկ կամ նոր բեռով : Բայ կերպ շի-
նուած շոգենաւ մը առաջին ճանապար-
հորդութիւնն ըրաւ Արլենիէն դէպ 'ի
Հարդլըբուլ :

Բայ նաւն, որ 90 ոտք երկայնու-
թիւն ունի, երկաթէ է, և երեք մաս
կը բաժնուի, որոնք իրարմէ կրնան զա-
տուիլ կամ կցուիլ ըստ կամ ծղխնինե-
րով, որ երկաթի հաստատուն լիսեռ-
ներով կ'ամրացուին : Բաւըն նաւաստի-
ները կը գրաւեն, միջին մասը բոլորու-
մին վաճառք ընդունելու համար որո-
շուած է, իսկ խելքն շոգեշարժ մեքե-
նայից համար է :

Սիջին մասն այնպէս յարմարեցուած
է՝ որ դիւրութեամբ ու քիչ ժամանակի
մէջ կրնայ ձգուիլ ու տեղն ուրիշ մը
փոխանակուիլ ամենեւին հաւասար մե-
ծութեամբ, թէ դատարկ ըլլայ և թէ
վաճառքով բեռնաւորուած : Բայ փո-
խանակութիւնը լմննալէն ետեւ շոգե-
նաւը ճամբան կը շարունակէ, առանց
ստիպուելու նաւահանգիստ մը ուշա-
նալ վաճառքը թափելու համար :

Եթէ նոր ճանապարհորդութիւն

ներն օգտաւէտ արգասիք մը ունենան,
ինչպէս եղաւ առաջին ճանապարհոր-
դութիւնը, կը մտածուի այս ոճով այն-
պիսի շոգենաւ մը շինել, որ 2,000 տա-
կառաչափ ընդունակութիւն ունենայ :

Ներքնածովային հեռագրական պարանք :

Ի բաց առեալ Բոլանդական պարանն
ու Սիջերկրականին մեծ պարանն որ
Խտալիան Բիթիկէի հետ կը կապէ, ա-
հաւասիկ հետեւեալներն են ներքնածո-
վային հեռագրական մանր պարանները :

Բենէն առաջինն է Տովրէն մինչև
Վալէ եղած պարանն, որ 1851 տարւոյն
հաստատուեցաւ, 32 հազարամէդր եր-
կայն և 4 թել : Նոյն տարւոյն մէջ հաս-
տատուեցաւ Սիսիբիէն մինչև Բա-
տուգա եղած պարանն, որ 1 1/2
հազարամէդր երկայնութիւն ունի և
մէկ թել մը միայն : Յամին 1852 Տո-
վրէն ինչուան Սոդէնտա եղած պա-
րանն հաստատուեցաւ, որ 112 հազա-
րամէդր երկայնութիւն ունի և մէկ
թել մը միայն : Նոյն տարւոյն մէջ հաս-
տատուեցաւ նաև Հոլի-Սիտէն մինչև
Հավա եղած պարանն, որ 112 հազա-
րամէդր երկայն է և մէկ թել մը միայն
ունի : Յամին 1853 Ընդդիմ կապուե-
ցաւ Հոլանտիոյ հետ հեռագրական պա-
րանաւ մը, որ 172 հազարամէդր եր-
կայնութիւն ունի և 3 թել : Նոյն տա-
րին հաստատուեցաւ Բորդ-Բադրի-
քէն ինչուան Տոնէկրտի եղած պա-
րանն, որ 19 հազարամէդր երկայն է
և 6 թել ունի : Վիչ մը ետքը դար-
ձեալ նոյն տարին երկրորդ պարան մըն
ալ հաստատուեցաւ այս երկու տեղեացս
մէջ : Յամին 1854 Վորսիգայի պա-
րանն հաստատուեցաւ Խտալիոյ հետ,
որ 98 հազարամէդր երկայն է և 6 թել
ունի : Նոյն տարին Վորսիգան կապուե-
ցաւ Սարտենիոյ հետ 15 հազարամէդր
երկայն պարանաւ մը, որ 6 թել ունի :
Նոյն տարին Սեծ-Պելզէն, Տանխմար-
գայի մէջ, դէպ 'ի ցամաք պարան մը
ձգուեցաւ 22 հազարամէդր երկայն և